

ՈՂՋՐՄՈՒԹԵԼՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ

Զկարծես, թէ արքայութիւնը դրամով կը գնուի, ո՞չ, այլ՝ յօժարութեամբ, որ դրամի միջոցաւ կը յայտնուի: Ոմանք կ'ըսն. «Եթէ այդպէս է, ուրեմն դրամով կ'ըլլայ»: Դրամով չ'ըլլար, այլ՝ կամքով, որովհետեւ այրի կնոջ նման դուն եւս կրնաս երկու դահեկանով երկինքը գնել, եթէ բարի կամեցողութիւն ցոյց տաս, առանց որուն նոյնիսկ ահագին արծարով չես կրնար:

Աստուած արքայութիւնը խոստացաւ ո՞չ թէ գաւաք մը պաղ ջուրի փոխարէն, այլ՝ սրտի յօժարութեան, նաեւ ոչ ալ մահուան փոխարէն, որ ինքնին մեծ բան մը չէ: Ի՞նչ կ'արժէ հոգի մը տալը, երբ մարդը ինքնին ոչի՞նչ կ'արժէ: Մեր հոգին գին չունի առանց Քրիստոսի արեան, որուն համար սատանան կը նախանձի: Հետեւաբար, երկնից արքայութիւնը ո՞չ թէ դրամով կը գնուի, այլ՝ կամքով անոնց, որոնք դրամ կուտան:


Չեռքին տուածը ի՞նչ ալ ըլլայ, սրտի սերը կը յայտնէ որովհետեւ. հոգիի ձեռքերը տեսական եւ գործնական առաքինութիւններն են: Եւ որովհետեւ կամքը եւ կարեկցութիւնը մարմնաւոր բաներէ վեր են, եւ յաղթանակը ո՞չ թէ արծարն է, այլ՝ բարի կամեցողութիւնը, ի՞նչ որ յայտնի է այրիին օրինակէն, ուստի սրտի յօժարութիւն ցոյց տանք, որպէսզի ոչ միայն արքայութիւնը ստանէ, այլ լեւ սուրբ բարութիւնը առաջանանաւը բացին եւ քաջալերողը դարձան հաւատքի փթթումին ու ծաղկումին:

Եւ վերջապէս կը յիշատակուին բոլոր այն հաւատացեալները, այր թէ կին, ծեր թէ երիտասարդ, առանց սեռի եւ տարիքի խորութեան, որոնք Քրիստոսի անունով ննջած են՝ հաւատքով եւ սրբութեամբ ...

Շարունակելի

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒԹԻՒՆ ՀՎԱՏԱՏՈՒՄ

2.-Պատրաստութիւն ընծաներուն

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ
ՀԱՄԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ

Յիշատակութեան շարքին կու գան աւելնալու նաեւ բոլոր բարեպաշտ թագաւորներն ու աստուածասէր իշխանները, որոնք արդարօրէն դարձան քրիստոնէական կրօնքի ամրակայման ռահվիրանները: Քրիստոնէական կրօնքը պետական ճանաչողութիւն ստացաւ շնորհիւ այն թագաւորներուն եւ իշխաններուն, որոնք ո՞չ միայն իրենց սրտերը բացին Քրիստոնէութեան Լոյսին դիմաց, այլ մանաւանդ՝ իրենց երկրին սահմանները բացին եւ քաջալերողը դարձան հաւատքի փթթումին ու ծաղկումին:

Եւ վերջապէս կը յիշատակուին բոլոր այն հաւատացեալները, այր թէ կին, ծեր թէ երիտասարդ, առանց սեռի եւ տարիքի խորութեան, որոնք Քրիստոսի անունով ննջած են՝ հաւատքով եւ սրբութեամբ ...

ՃԱՌԵՐ



ՅՈՒ ԽՈՍՔ ԻՆ ՈՅԵՐՈՂԻ ԲՐԱԳ Է ՈՒ Խ ԾԱՒՇՆԵՐՈՂԻ ԼՂՅԱ
(Ա. 119.105)

Ժ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, Յ ՆՈՅԵՆԻ 2024

ԹԻՒ 44

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 22.15-25: Եփ. 1.1-14: Ղկ. 8.17-21

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՎՐԵՏԱՎՐԱՅՆ
ՀԱՅ ՊՈՐԿՎԱՐ
8.17-21

Չկայ ծածուկ բան մը, որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը, որ չգիտցուի եւ երեւան չգայ: Ուրեմն ուշադիր եղէք, թէ ինչպէս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողին պիտի առնուի նոյնիսկ այն ինչ որ կը կարծէ, թէ ունի:

Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խուռն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ ու եղբայրներդ դուրս են եւ կ'ուզեն քեզ տեսնել»:

Յիսուս լսաւ. «Մայրս ու եղբայրներս ամոնք են, որոնք Աստուոյ խօսքը լսեն եւ կը գործադրեն»:

«Մայրս ու եղբայրներս ամոնք են, որոնք Աստուոյ խօսքը

կը լսեն եւ կը գործադրեն»

Վատահարար մեզմէ իրաքանչիրին փափաքն է ըլլալ եղբայր Քրիստոսի: Սիրելիներ, կարեւորը կամենալ է: Եթէ կ'ուզենք Քրիստոսի եղբայրներ ըլլալ, իր կամքը պէտք է կատարենք, ականջ պէտք է տանք Աստուոյ ծայնը լսելու աղօքքի ճամքով: Աստուոյ ծայնը լսելու համար պէտք է լաւազէն ճանանքը զԱստուած Աստուածաշոնչին ընդմէջէն: Աստուածաշոնչը մեր ամէնօրեայ հոգեւոր սմունդի աղքիր դարձնենք, մենք՝ որ բոլորս անոր ծարաւը ունինք: Կարդանք, սմանինք, այն ատեն պիտի լսենք եւ գործադրենք այն ինչ՝ որ կը պատգամէ մեզի Քրիստոս:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՀՌՈՍՍԱՅ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ ԵՒ
ՍԱՐԿԱՏԱԳԱՅՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴՈՅՆ

Յ-րդ դարուն Հոռմի մէջ ապրած
քաջ առաջնորդ եղած է Ստեփանոս
Հոռմայ հայրապետը: 254 թուականին
կը բարձրանայ Հոռմի արողին վրայ
եւ կը գահակալէ մինչեւ իր նահա-
տակութիւնը՝ 257 թուական:

Ստեփանոս Հայրապետ եղած է իր
հօտը պաշտպանող եւ քաջախրող հո-
գեւրական մը: Ան նոյնիսկ դարձի կը
քերէ եւ քրիստոնեայ կը մկրտէ նե-
մեսիոս անունով հեթանոս իշխան մը
եւ անոր կոյր դուստրը, որ մկրտը-
ւելէն ետք կը բժշկուի եւ աչքերը կը
բացուին: Իշխանը նոյնիսկ սարկա-
ւագ կը ձեռնադրուի եւ սակայն իր
ունեցած հաստատ հաւատքին համար
կը նահատակուի կայսեր կողմէ: Այս-
պիսով Ստեփանոս հայրապետի գա-
հակալութեան շրջանին բազմաթիւ
հոգեւրականներ եւ հաւատացելներ
կը նահատակուին Հոռմի մէջ:

Օր մը, երբ Ստեփանոս Հայրա-
պետ Ս. եւ անմահ պատարագ կը մա-
տուցէր, յանկարծ զինուորներ կը պա-
շարեն եկեղեցին եւ կը փորձեն խոր-
տակել դուռը եւ ներս մտնել: Այն պա-
հուն, երբ Ս. Հայրապետը կը հաղոր-
դրի եւ կը հաղորդէ ժողովուրդը,
զինուորները ներս խուժելով կը նա-
հատակեն զինք իր արիւնը խառնելով
Ս. հաղորդութեան սկիհին մէջ գտնը-
րող Քրիստոսի սուրբ արեան: Հաւա-
տացելներ պատուով կը բաղեն զայն:
Յ-րդ դարուն անիւնները կը փո-
խադրուին իր անունը կը փառի մը
մէջ եւ այնտեղ կը հանգչի ան այսօր:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ
ԻՆՉՊԵ՞Ս ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՀԱՅ
ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԶԻՆ ՄԵԶ

Հայ եկեղեցւոյ մէջ ընդհանրապէս
խոստովանութիւնը կը կատարուի հա-
ւաքական: Ապաշխարութեան եւ խոս-
տովանութեան եկողները ծունկի կու
գան, իրենցմէ մէկը կը կարդայ «Մեղայ
Ամենասուրբ Երրորդութեան» զղումի
աղօթքը, որուն մէջ յիշուած են կամայ
եւ ակամայ գործուած բոլոր մեղքերը,
իսկ բահանան մէջ ընդ մէջ կ'ըսէ. «Աստ-
ւած քողութիւն շնորհէ»: Զղումի
աղօթքէն վերջ, քահանան «Ողորմեսցի
Զեզ մարդասէր Աստուած» աղօթքը
արտասանելով, Աստուծոյ անունով
մեղքէ կ'արձակէ խոստովանութերը:

Հաւաքական խոստովանութենէն
զատ, անիրամեշտ պարագաներուն
ապաշխարութեան եկողներ՝ կրնան
առանձին ներկայանալ քահանային եւ
խոստովանի իրենց մեղքերը եւ բարի
խորհուրդներ ստանալ անկէ մեղքի դէմ
պայքարելու համար:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՈԹԵՆՔ

Զու Խաչը մեզի թող ապաւէն
ըլլայ Տէր Յիսուս, երբ որ երեւաս
Հօր փառքով՝ լուսաւոր ամպերու
մէջ: Այն ժամանակ, մենք չենք
ամշնար՝ քեզ հաւատացողներս,
այլ՝ Զու մեծ զօրութեամբդ կ'ուրա-
խանանք, Զու աջ կողմը իբրեւ լու-
սոյ որդիներ, իբրեւ ցերեկուան որ-
դիներ: Ամէն:

ՀՈՎԵՒՈՐ
ԴԱՍ ԳԱՍ

ՔՐԻՍՏՈ ՕՎՐՏՎԿԱՎՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ-
ԵԿԵՂԵՑԻՐԾ ՎԱՏՈՒՇՈՅ ԽՈՍՔՈՎ
ՄԽՈՒՅՆԵԼՈՒ ՀԱՎԱԼԱՑԵՎՈՒԹԵՐԸ

«Երբ պանդոկէն պիտի մեկնէր,
պանդոկապետին երկու արծաթ դահե-
կան տուաւ եւ ըսաւ.՝ «Խնամէ զայն»
(Ղ. 10.35): «Պանդոկէն մեկնիլ» բա-
ցատրութիւնը չի նշանակեր Քրիս-
տոսի հեռացումը եկեղեցին: Անոր
մեկնումը մարմնաւոր հասկացողո-
ւթիւն ունի: Քրիստոս ֆիպիթապէս հե-
ռանալէ առաջ եկեղեցին «պանդո-
կապետին երկու արծաթ դահեկան
տուաւ»: «Պանդոկապետը՝ եկեղեցւոյ
վարդապետներն են, իսկ երկու արծաթ
դահեկանները՝ Հին եւ Նոր Կոտակա-
րաններն են, կ'ըսէն Ստեփանոս Սիւ-
նեցի եւ Նարեկացի: Յիսուս եկեղեցին
երկու արծաթ դահեկանները (Հին եւ
Նոր Կոտակարանները) տալէ ետք,
ըսաւ. «Խնամէ զայն»: Այս իմաստով,
Քրիստոս եկեղեցին պարտականու-
թիւն յանձնեց, որ Հին եւ Նոր Կոտա-
կարաններով, այլ խօսքով՝ Աստուծոյ
խօսքով սնուցանելու եւ թրծելու
հաւատացեալները:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈՎԵՒՈՐ ԴԱՍԸ

Աստուծոյ խօսքին կաթը հաւա-
տացեալներուն ջամբելը՝ կոչումն է
եկեղեցւոյ:

ԵԹԵ ԿԱՄ ԵՐԲ Կ'ՈՒՁԵՄ...

ԵԹԻ ԱՄԲՏԴ ՎԱՏՈՒՇՈՅ ՀԱՎԱԼ-
ՎԵՐԱՎԱԳԻՇՈՒԹԵՎՄՐ ԼԵՅՈՒՆ Է ԵՒ
ԿՈՒՁԵՄ ԶԻՆՔ ԳԵՎԱԲԵԼ ,
ՎԱՐԴՎ ՍՎԴՄՈՍ 67

Աստուած՝ ողորմէ՝ մեզի եւ օր-
հնէ՝ մեզ, բարեհա՛ճ եղիր մեզի հան-
դէպ, որպէսպի աշխարհը գիտնայ բու-
կամքդ, բոլոր ազգերը ճանչնան թէ
դո՛ւն ես փրկիչը: Ժողովուրդները
թող գոհութիւն յայտնեն քեզի, ո՛վ
Աստուած, բոլոր ժողովուրդները թող
գոհութիւն յայտնեն քեզի: Ազգերը
թող ուրախանան ու ցնծան, որով-
հետեւ դուն արդարութեամբ կը դա-
տես ժողովուրդները, եւ աշխարհի բո-
լոր ազգերը ի՛նքնդ կ'առաջնորդես:
Ժողովուրդները թող գոհութիւն
յայտնեն քեզի: Ազգերը թող գոհութիւն
յայտնեն քեզի:

Երկիրը իր բերքը տուաւ, Աստ-
ուած՝ մեր Աստուածը իր օրհնութիւնը
մեզի տուաւ: Աստուած թող օրհնէ՝
մեզ, եւ ամբողջ աշխարհը թող
երկիրով պատուէ՝ զայն:

ԱՍՏՈՒՇՄԱՆՉՈՒՆՁԸ

Աստուծոյ Խօսքը՝ Սուրբ Հոգիին
սուրն է յանձնուած հաւատացեալին
(Ղ. 6.17): Առանց այս սուրին՝ մարդը
չի կրնար պարտութեան մատնել Սա-
տանան: Քրիստոս Աստուծոյ խօսքին
սուրով էր, որ յաղթեց Զարին, երեք
անգամ կրկնելով. «Օրէնքի գիրին մէջ
գրուած է...» խօսքը (Մտ. 4.4,7,10):